

Մի լայր բերուն օրհորդ,
 Մի նորոգեք մեր վիշաք.
 Ըհա սրդ է շոյասան,
 Սայր ու վայր Բշուառութեան, ...
 Աջօ բոցօրն շմարէ,
 Ամեն հայրն ալ պատմէ.
 Արդ գնա՛ ի մենջ հեռացիր,
 Օստորոտս մեր ներկեցիր,
 Եւ ահա՛ դա Մայրաւոր,
 Բօզդ միգաւ շքեւորատ

Ինձեզ արեանց պահապան,
Չեանք ի ծնունտ նոր լայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿ ԼԱԼՈՂ

Ա՛հ, ո՛ւր գնամ, ի՞նչ անեմ,
Ի՛նչ գանկատեմ, ո՛ւմ ոսեմ:
Տաւս ցաւից շատացաւ,
Հայաստանի հողաւոր,
Միշտ աս' ու վախ ձայնելով,
Կեանքս իսպառ մաշեցաւ:
Ես տեսնում եմ ճար չկայ,
Ճակատագիր ջնջուելու,
Այրարատի սուրբ Ողին,
Ի՞նչ սուգը չի փարատում:
Կայծեր լուներ դուք բարով,
Չեզմէ գնամ ես լայով:
Մինչեւ երկնից աջն անեղ,
Ծագէ կարմիր իւր աղեղն:

Պ. Կարապետ Յովսէփեան
Արարհամեանց

Անցեալ Հոկ. 12ին՝ որ Ս. Թարգմանչաց
տոնախմբութիւն էր, վաղիս Ե. վարժարա-
նի աշակերտք ճառեր պրեցին ու պատրաս-
տուեցան մեծ եռանդով հանգէս մի
անելի յիշատակ նոցին բարերար երախ-
տեաց: Սակայն առիթովը յետս մնաց. որոյ
վրայ ցաւեցանք եւ կցաւինք . . .
Ա՛ առիթ եւ առիթներ, ո՞ր արգելք ու ար-
գելքներ . . . բայց ի՞նչ անենք առիգունձ
ներ լուել . . .

« Խաղ շատ գիտենք,

« Բայց ձայն չունինք . . . »

Հետեւեալ մէկ ճառը կ'հրատարակենք,
որ նոյն աւուր հանդիսի համար էր գրուած:

ԵՐԱՅԱՅՐՈՅԵՐ

Այսօր մեր սուրբ եկեղեցին անշուք կեր-
պիւն կատարեց իւր երախտագիտութեան
պարտքը, անդգալի կերպով յիշատակելով
մեր սուրբ Թարգմանչաց տօնը եւ պաշ-
տելի անունները անուն՝ որոց վրայ կ'սքան-
չանամ, բայց եւ կցաւ իմ որ իմ տկար գը-
րիչը անկարող է ոչ միայն նոցա մեծագոր-
ծութիւնը ներկայացնել ձեզ, այլ եւ կը
դժուարանայ իմ զգացմանցս Թարգման
էինել:

Մենք պարտք մեծ ունինք նախնեցե-
այս բարերար անձանց. որոց խնկելի յիշա-
տակը մեծ է բան դամէն դիւցազունց քան
դամէն սաւաքինեաց Հայաստանի համար:
Վասնորի այս շնորհարհիկ անձինքն էին, որոց
օիրոյն հաճեցաւ Աստուած յերկնից յեր-
կիր խնարհելու հայկեան տաւերը տակը
ծաղործել ու բաշխել մեր ազգին: Անհա-
մեմատ շնորհքով Այս աշխարհի անձինքն էին որ
սուրբ Ղիլքը Հայկեան բառով Հայաս-
տանին ընծայեցին այս աշխարհի անձինքն էին որ
յաւիթենական փոշիների տակ Թաղուած
մեր ազգի պղծեաւորութիւնը մեր դիւ-
ցազանց պատմութիւնը ի լոյս ընծայեցին:
Վերջապէս սրբա առաւօտեան արուսեակիք
դարձան, որ Թորգոմեան սեպին սրտից տը-
խուր հրիզոնը լուսաւորելով երկրէս յեր-
կիրն առաջնորդեցին: Երջանիկ անձինք:

Այլէ՛ք զարմացէք եւ միանգամայն ըս-
քանչացէ՛ք Թէ որչափ դժուարութիւնք
աքնութիւնք եւ սուրբ քրտինքներ նուի-
րած են այս վաստակոյ. եւ Թէ Աստուա-
ծային նախախնամութիւնը ի՞նչ մեծ պաշ-
պանութեամբ կ'զօրացնէր մեր Հայրեն-
եաց վերանորոգիչները. որով առաքինացն
մինչ իսպառ ոչ արգելքներէ վհատեցան .
ոչ հեշտութիւններէ փափկացան . . .

Սուրբ Թարգմանչաց վարքը, աղինւ եղ-
բարք, վսեմ օրինակ մի է ամենուր եւ սը-
տնցմէ երկու գլխաւոր խրատ ու սքանչե-
լի օրինակ կ'աւանդուին մեզ, որոց հետեւիլ
պարտիմք:

Առաջին Թէ ինչպէս այն գեղջուկ Հա-
յերը ջերմեառնող սիրով սիրեցին ուսմունքը,
եւ առաւել քան զուսմունքը իրենց Հայ-
րենիքը. եւ առաւել քան զՀայրենիքը՝
Յիսուան ու երկինքը: Սիրեցին ուսմունքը
օտարութեան մէջ դեգերել յաճն առնե-
լով. սիրեցին Հայրենիքը՝ Հելլենստեաց
փառք եւ մեծութիւնք արհամարհելով:
Սիրեցին երկինքը՝ Հայրենեաց համար այն-
չափ քրտնելէն զկնի՝ Թշուառ եւ անպա-
տիւ վիճակ ու վախճան ունենալով. բայց
անսասան եւ ի յոռտով երկնից փառաց ակն
առնելով:

Երկրորդ, կ'ուսուցանեն Թէ ինչպէս ա-
ռաքելի կեանքը միշտ հարածուած, բայց

